600.0088.20.04.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 ապրիլի 2016 թվականի №88Ա
ք.Երևան

«ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԿՎԱՐՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0058 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի №18 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի №143Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 20-ի №18 որոշմամբ «ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԿՎԱՐՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Անի» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0058 լիցենզիան (այսուհետ՝ №0058 լիցենզիա)՝ 15 տարի գործողության ժամկետով, որն ավարտվում է 2016 թվականի ապրիլի 20-ին,

բ) 2016 թվականի մարտի 23-ին Ընկերությունը դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ №0058 լիցենզիայի գործողությունը 15 տարի ժամկետով երկարաձգելու հայտով,

գ) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) Հանձնաժողովին ուղղված 2016 թվականի մարտի 24-ի №1/23.6/10530-16 գրությամբ միջնորդել է ուժը կորցրած ճանաչել №0058 լիցենզիան՝ հայտնելով, որ՝

- 2015 թվականի փետրվար ամսին Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից Կայանում իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերվել են բնապահպանական օրենսդրության մի շարք պահանջների խախտումներ (ջրառի կետում քանդված է եղել բետոնե

պատվարը, բացակայել է ձկնապաշտպանական ցանցը և ապահովված չի եղել էկոլոգիական թողքը), ինչի պատճառով տեսչության 2015 թվականի փետրվարի 20-ի №000001 որոշմամբ կասեցվել է Կայանի գործունեությունը, իսկ տնօրենը ենթարկվել է վարչական տույժի՝ ընդունելով թույլ տրված խախտումները,

- 2016 թվականի մարտ ամսին Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության՝ Կայանում իրականացված ստուգման արդյունքում պարզվել է, որ վերը նշված թերությունները չեն վերացվել,
- Նախարարությունը, հաշվի առնելով վերը շարադրված փաստերը, 2016 թվականի մարտի 17-ի №5/18.2/50584 գրությամբ ծանուցել է Ընկերությանը՝ վերջինիս տրամադրված ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետը չերկարաձգելու մասին,

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2016 թվականի մարտի 30-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ №0058 լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտի քննարկման և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենքներին և Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված էներգետիկայի բնագավառում լիցենզավորման կարգին (այսուհետ՝ Կարգին) համապատասխան իրականացնելու փաստի ուսումնասիրության նպատակով,

ե) Հարուցված վարչական վարույթի շրջանակում 2016 թվականի ապրիլի 12-ին ներկայացված գրությամբ Ընկերությունն ըստ էության ընդունել է թույլ տրված խախտումները՝ հայտնելով, որ 2013 թվականին պայթեցվել է Կայանի գլխամասային հանգույցը (ինչի առիթով հարուցվել է քրեական գործ), և Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում այն վերականգնելու և բոլոր նորմատիվային պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Սակայն նշված աշխատանքներն ամբողջությամբ ավարտելու համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, և 2015 թվականին Ընկերությունը դիմել է Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն՝ ժամանակավորապես դադարեցնելու իր գործունեությունը: Ելնելով նշվածից՝ Ընկերությունը վերստին խնդրել է երկարաձգել №0058 լիցենզիայի գործողության ժամկետը,

զ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում պետական

քաղաքականության հիմնական սկզբունքներից է տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը,

է) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործունեության լիցենզիա տրվում է, եթե նման հայտով Հանձնաժողով դիմած իրավաբանական անձը սեփականության իրավունքով կամ պայմանագրով իր տնօրինության տակ ունի անհրաժեշտ զույք,

ը) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտը մերժվում է, եթե՝

- ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում նշված օրենքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին,
- օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ դեպքերում,

թ) Կարգի 34-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Հանձնաժողովը մերժում է լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտը, եթե՝

- հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ կեղծ, կամ խեղաթյուրված, կամ չեն համապատասխանում օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջներին,
- լիցենզավորվող գործունեության իրականացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման,

ժ) №0058 լիցենզիայի պայմանների 6.1 կետի համաձայն՝ Ընկերության գործունեությունը պետք է համապատասխանի №0058 լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին,

ժա) №0058 լիցենզիայի պայմանների 6.2 կետի համաձայն՝ Ընկերությունը լիցենզավորված գործունեությունը պետք է իրականացնի տնտեսական արդյունավետության սկզբունքներին, ստանդարտներին, անվտանգության տեխնիկայի նորմերին և հուսալիության ցուցանիշներին համապատասխան՝ ապահովելով էլեկտրական էներգիայի (հզորության) առաքման (արտադրության) քվոտաներով սահմանված ցուցանիշները,

ժբ) №0058 լիցենզիայի պայմանների 6.4 կետի համաձայն՝ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնելիս՝ պարտավոր է ապահովել մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունը, ինչպես նաև գույքի պահպանությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան,

ժգ) իրականացված վարչական վարույթի արդյունքում Հանձնաժողովի աշխատակազմը փաստել է, որ՝

- Ընկերությունը չունի Կայանի շահագործման համար անհրաժեշտ ջրօգտագործման թույլտվություն, իսկ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականություն իրականացնող իրավասու մարմինը՝ Նախարարությունը, մերժել է դրա ժամկետի երկարաձգումը,
- Ընկերությունը չունի լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույք, քանի որ Կայանի տեխնիկական վիճակը, այն է՝ գլխամասային հանգույցը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին,

և, հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածը, 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և Կարգի 34-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել №0058 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Ընկերության 2016 թվականի մարտի 23-ի հայտը:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 20-ի «Գրիգոր Թադևոսյանի կվարց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №18 որոշումը,

2) Հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 27-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №143Ա որոշման 1-ին կետի 93-րդ ենթակետը:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է՝

1) սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում,

2) խախտումները վերացնելուց հետո Կարգին համապատասխան դիմել Հանձնաժողով՝ Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության նոր լիցենզիա ստանալու նպատակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
20 ապրիլի 2016թ.
ժամը 16^{00}